

Արձանագրություն հ.6

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
07.10.16 թ. կայացած նիստի:

Օրակարգում՝

1. Կրթության մասին ՀՀ օրենքի նախագծի քննարկումը:
2. Մագիստրոսական ծրագրերի մասին հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

Բարձրագույն կրթության մասին ՀՀ օրենքի նախագծի մասին զեկուցեց
Ֆակուլտետի դեկան, պրոֆ. Հ.Սարգսյանը: Նա ներկայացրեց այն դրույթները, որոնք
վիճահարույց էին և ասաց, որ ֆակուլտետի կողմից շտկումներ մտցնելու
առաջարկներ պետք է ներկայացնել:

Արտահայտվեցին ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ.Ղարիբյանը, պրոֆ.
Վ.Բոստանջյանը, դոցենտներ Կ.Եղոյանը, Գ.Խաչատրյանը:


Որոշեցին Կրթության մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ կարծիք տալու
համար ձևավորել աշխատանքային խումբ, որը մանրամասն կետ առ կետ
դիտողությունները կներկայացնի ֆակուլտետի անունից:

Երկրորդ հարցի մասին զեկուցեց դեկանի տեղակալ, Կ.Եղոյանը: Նա ներկայացրեց
ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների ներկայացման
ժամանակացույցը:

Որոշեցին, որ մինչև սույն թվականի դեկտեմբերի 15-ը ամբիոնները պետք է
ներկայացնեն թեմաների անվանումները:

Ֆակուլտետի գիտխորհրդի
նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր

Ֆակուլտետի գիտխորհրդի
քարտուղար, տ.գ.թ., դոցենտ



Հ.Լ.Սարգսյան

Ա.Հ.Համբարձումյան

Արձանագրություն հ.7

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
26.10.16 թ. կայացած նիստի (հարցման կարգով):

Օրակարգում՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու երաշխավորություն տալու մասին հարցը:

Որոշեցին Առկա ուսուցմամբ մագիստրատուրայի „Գործարար կառավարում,, մասնագիտության 1-ին կուրսի ուսանող Արման Արմենի Դավթյանին և „Մոդելավորումը ֆինանսատնտեսական համակարգում,, ուսանողուհի Լուսինե Արմենի Դավթյանին երաշխավորել մասնակցելու վերոնշյալ մրցույթին:

Ֆակուլտետի գիտխորհրդի
նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր

Ֆակուլտետի գիտխորհրդի
քարտուղար, տ.գ.թ., դոցենտ



Հ.Լ.Սարգսյան

Ա.Հ.Համբարձումյան